ԼԵՀԱՀԱՅՈՑ ԳԱՂԹԸ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ

Գրեց՝ Ց. ՉԱՒՐԵԱՆ

IV

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏ

Եւ ահա այս մեծ յաջողութիւնների շրջանում լեհահայերի գլխին սկսում են կուտակուել սեւ ամպեր, որոնք խսպառ կործանեցին նրանց բոլոր նուաճումները, իջեցրին նրանց նիւթական ու մտաւոր մակարդակը եւ բոլորովին դիմազուրկ արին:

Այդ տեղի ունեցաւ ԺԷ. դարի առաջին կիսին, այն չարաբախտ տարիներին, երբ Հայաստանը պատառ-պատառ էր լինում միմեանց հետ պատերազմող թիւրքերի եւ պարսիկների միջեւ: Շահ Աբաս Մեծի ժամանակաշրջանն էր:

Շահը մի կողմից աշխատում էր Թիւրքիայի եւ Պարսկաստանի միջեւ ստեղծել բնակչութիւնից զուրկ, ամայի մի տարածութիւն եւ դրանով կասեցնել թիւրքերի յառաջխաղացումը, միւս կողմից, ինչպէս պատկերաւոր ձեւով արտայայտում է արեւմտեան հայագէտներից մէկը,) զուրկ սեփական երկրում դրամից եւ կանոնաւոր հիմքերի վրայ դրուած առեւտրից ու արդիւնաբերութիւնից՝ վճռեց այդ ամէնը կազմակերպել հայերի միջոցով՝ գաղթեցնելով Արաքսի հովտի հայութիւնը դէպի Պարսկաստանի ներսերը:*

Ծանր փորձութիւնների էր ենթակայ այդ ժամանակ Ե՛ւ Էջմիածնի կաթողիկոսական աթոռը, որ բռնում էր Մելքիսէթ կաթուղիկոսը (1593–1624)՝ մի կամազուրկ եւ կասկածելի արժանիքների տէր մարդ: Նա երկու անգամ հրաժարուեց կաթուղիկոսական կոչումից, առաւ մի քանի աթոռակիցներ, ըստ երեւոյթին, ոչ առանց նիւթական շահի եւ, վերջապէս, 1624 թուին ընդմիշտ թողեց Էջմիածինը եւ մեկնեց Կ. Պոլիս, այնտեղից էլ անցաւ Լեհաստան:

Լեհաստանում նա գտաւ եպիսկոպոսական աթոռը թափուր, Մեսրոպ եպիսկ.-ի մահից յետոյ (1623–1625): Լվովի գաղութը, որ ղեկավար դիրք ունէր լեհահայոց մէջ, եպիսկոպոսի ընտրութեան ժամանակ տատանւում էր ընդմէջ երկու թեկնածուների, որոնք ներկայացնում էին լվովի երկու հարուստ եւ ազդեցիկ հայ ընտանիքներ՝ Հոլուբովիչ – Հորիչկաների եւ Թորոսովիչների:

Մելքիսէթը, հակառակ որ հրաժարուած կաթուղիկոս էր եւ, ըստ երեւոյթին, աթոռից հեռանալու պատճառով, կորցրել էր ընտրուած թեկնածուի եպիսկոպոսական պաշտօնը հաստատելու իրաւունքը, իր վրայ առաւ Լվովի եպիսկոպոս նշանակելու դերը եւ հարցը դրեց գործնական հողի վրայ՝ պահանջելով թեկնածուից բաւական խոշոր մի գումար՝ 2000 դուկատ: Թեկնածուները շատ երկար սակարկեցին նրա հետ, մինչեւ որ Նիկոլ Թորոսովիչը, մի երիտասարդ եւ եռանդուն մարդ), գործը վերջացրեց Մելքիսէթի հետ՝ տալով նրան մի համեմատաբար փոքր գումար՝ 300 տալեր**):*

Հայ համայնքը՝ իմանալով Թորոսովիչի ընտրութիւնը նախկին կաթուղիկոսի կողմից եւ գտնելով, որ թեկնածու ընտրելու իր իրաւունքները ոտնահարուած են, բողոքեց եւ ար-

---

*) F. Macler, "Revue des Etudes Arme'-niennes", 1927.

*) Ծնուած 1605 թ., Լվովում: Ցայտնի չէ թէ ո՞ւր է ստացել իր կրթութիւնը: Սարկաւագ ձեռնադրուած Պոլսում, Մելքիսէթի Լվով գալու նախօրեակին:

**) Առաքել Դաւրիժեցու պատկերաւոր արտայայտութեամբ՝ «Կաթուղիկոսն տեսանելով զյոլովութիւն առ ձեռն պատրաստ ոսկւոյն, նաեւ ակնկալութիւն եւս յոլովից ոսկւոյ առ յապայն, հաճեցաւ օրհնել զՆիկողայոս եպիսկոպոս ի Լովայ»: Առաքել Դաւրիժեցի, էջ 364: